

պարանքէն կ'իմանաս հնարուած գիւտին մեծութիւնը և ոյժը : Սէկ ոտքը առաջ դրած՝ քայլ մը առնելու կերպով, օրինակ է յառաջադիմութեան որ տպագրութեամբ կ'ըլլայ՝ երբոր աղէկի գործածուի : Արբոր կերպարանքին ծանրութեանը և քիչ մը նաև մաղձոտութեանը նայելու ըլլաւ նէ, կարծես որ յայտնի կը տեսնես թէ ինչպէս յոգնեցուցեր է խելքը՝ ան սքանչելի գիւտը հնարելու համար, և թէ ինչպէս արդեօք մտմտութի մէջ ընկեր է ան սուր միտքը՝ երբոր գուշակեր է թէ այնչափ բարեաց հետնորչափ չարեաց ալ պատճառ պիտի ըլլայ օր մը ան գիւտը : Իսկ ձեռքի մագաղաթին վրայ եղած լստուածաշնչին խօսքը՝ թէ Երեմիայի ԼՈՅՍ, ինչպէս որ պէտք է նէ կը հասկըցնէ թէ տպագրութեան բուն վեճ ու սրբազան նպատակը ինչ է. այսինքն մոլորութեան խաւարը փարատել, և մարդկանց առաջնորդել առ լոյսն ճշմարտութեան : Սէկ խօսքով, աս արձանին վրայ յայտնի կը տեսնուի ոչ միայն Ստեփանոսի հանձարը, և տպագրութեան գիւտին մեծութիւնը, այլ և Տ' Լիւթին վարպետութիւնը և փիլիսոփայութիւնը : Երձանին պատուանդանը քառակուսի է, ու չորս կողմը բարձր քանդակով ձևացած են ան երեւելի ու գըլխաւոր անձինքը որ աշխարհիս չորս մասին մէջ մասնաւոր կերպով տպագրութեան յառաջադիմութեան պատճառ եղեր են : Եւ թէ որ մեր Լեւոնիստիկայի պատկերը կը պակսի ասոնց մէջ, մենք պէտք է համարինք թէ անոր համար է՝ վասն զի օր մը իր ազգը առանձին արձան մը պիտի կանգնէ իրեն :

Եւ այն մենք մեր ազգին մէջ եղած տպագրութեան պատմութիւնը զատ յօդուածով կը դնենք :

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

Սեպտեմբերի 1-ին Լոյսի Բանասեր Գիւտի Գործարար Կենտրոն :

ՍԵՏԱԿԱՐ ԳՐԻՉ ԳՈՐԾԱԾԵԼՐ ՀԻՄՆԱՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱՆ ՄՐ ԵՂԱԾ Է ԱՄԷՆՏԵՂ. ՎԱՍՆ ՂԻ ԹԷ ՄԱՔՈՒՐ ԿՐ ՀԱՆԷ ԳՐԵՐԸ, Ե ԹԷ շԱՄ ԿՐԴԻՄԱՆԱՅ. ՄԻԱՅՆ ԹԷ ԳՐԵԼԷԴ ԵՏՔԸ ԹԷ ՈՐ ԱՂԷԿ ՄՐ չԸ ՍՐԲԵՍ՝ շՈՒՄՈՎ ԿՐ ԺԱՆԳՈՒԹԻ : ԵՅՈՒՆԻ ԲԱՆ Է ՈՐ ԱՍ ԺԱՆԳՐ ԹԱՆԱՔԻՆ ՄԷՋ ԳՄՆՈՒԱԾ ԹԹՈՒ ՆԻԼԹԵՐԷՆ ԱՌԱՋ ԿՈՒԳԱՅ. ՈՒՍՈՒ ՈՐԱԿԵՍ ՂԻ ԱՍ ԲԱՆԻՍ ԱՌԱՋԸ ԱՌՆՈՒԻ՝ ՎԵՏՔ Է ԿԱՂԱՄԱՐԻՆ ՔՈՎՐ ԱՆԱԳԱՄԱՆ ՄՐ ԴՆԵԼ՝ ՄԷՋԸ ՄԱՆՐ ԿԱՎԱՐԷ ԳՆՄԱԿՆԵՐ ԼԵՑՈՒԱԾ. ՄԵՄԱՂԷ ԳՐԻՉՈՎ ԳՐԵԼԷՆ ԵՏՔԸ ՎԵՏՔ Է ԱՆՈՐ ՄԷՋ ԽՈԹԵԼ ԳՐԻՇՆ ՈՒ ՔԻՉ ՄՐ շԱՐԺԵԼ, ՈՒ ՄԷՋԸ ԹՈՂՈՒԼ. ԻՆՔԻՐՄԷ ԿՐ չՈՐՆԱՅ ՈՒ ԿՐ ՍՐԲՈՒԻ :

ՊԵՏԻՆՈՒՆ ԵՍ ԳԻՄԱՅԻՆ ԾԵԼԻ ԿԱՐԴԱՂԱԽ :

ՀԱՍՏԱՐԱԿ ԳԱՃՐ՝ ԱՌ, ՈՒ ԿՐԱԿԻ ՄԷՋ ԱՅՆՉԱՓ ՄԱՔԵՑՈՒ ՈՐ ԲՈՂՈՐ ՄԷՋԻ ջրեղէն մասունքը ելլեն. յետոյ մէկէն պաղլեղով խառնած ջրի մէջ ձգէ : Պաղ ջրին չափը պիտի ըլլայ 18 լիւպրէ, ու պաղլեղը 1 լիւպրէ : Ս եց ԺԱՄԻ չափ ասոր մէջ կենալէն ետքը հանէ ջրէն, ու բաց օդու մէջ դիր որ չորնայ. յետոյ նորէն փոռու դիր եփէ, ինչուան որ գաճը մոլթ կարմրութիւն մը ունենայ : Ետքը առ ծեծէ, մաղէ ու տակառներու մէջ կոխէ :

Եւ իկայ գործածել ուղած տտենդայնչափ պիտի թրջես որ թարմ պանիրի կակղութիւն ունենայ, և ան տեղն ալ որ կ'ուզես ասով ծեփել՝ առաջուց ջուր սրսկելով թրջէ, որպէս զի գաճին մէջի թացութիւնը շուտ մը չժըծէ : Եւ գաճը գործածելու համար նոր գործիքներ հարկաւոր չեն, սովորական ծեփիչը՝ բաւական

է : Երեւնայ թէ աս ծեփը բաց օդու մէջ ալ կենայ նէ՝ չայլայլիր , և չորնալէն ետքը սաստիկ կը կարծրանայ . թէպէտ և կամաց կամաց կը պնդանայ . խիստ քիչ կ'ընդարձակի ու կը քաշուի . փայտի , քարի , երկրթի և ուրիշ գաճի վրայ սաստիկ կը կըպչի : Երկրթը շատ կը գործածուի պատ ծեփելու , պատի վրայ զարդեր շինելու , սուտ մարմարիոն ձեւացընելու , անձրեւի ջրորդան՝ շինելու , այլեայլ առնօթներ շինելու ևն : Երբոր աւազն ու ասիկայ հաւասար չափով խառնես , շատ դիմացկուն ու ամէն բանի պիտանի ծեփ մը կը շինուի , որ Ենդղիացիք շատ բոնի ալ կը գործածեն :

Խօշի Կայլեցընելու Կեանքի :

ՍԱՆԴԻ՝ մէջ ծեծէ երկու մաս վանաչաքար՝ ու չորս մաս այրած փղոսկր¹ , յետոյ ասոնք մետաքսէ մաղէ մը անցու . սանդին մէջ ալ ածուխէ կրակ լեցու որ տաքնայ . ետքը կրակը մէջէն թափէ , ու մէջը կէս մաս ճերմակ քացախ լեցու , որուն մէջ նոյն չափ աղբիւրի ջուր ու կէս մաս շաքարի տորտ խառնած պիտի ըլլաս : Երբոր ամէնը մէկէն խառնելէն ետքը կը լեցընես սանդին մէջ , ու մէկէն վրան կ'աւելցընես ան մաղած շաքարը ու այրած փղոսկրը : Ետքը նորէն կը ծեծես՝ որպէս զի զանգուածը աւելի բարակ ու թանձր ըլլայ : Երբոր սանդը կը պաղի՝ կը հանես պղտիկ ապակէ կամ հողէ բղուկներու² մէջ կը լեցընես , ուր ինքնիրեն կը չորնայ . թէ որ կ'ուզես՝ նոյն ատենն ալ կրնաս գործածել :

Գործածելու ատենդ կ'առնես մէկ կարծր փետուր մը , և ջրի մէջ թրջելէն ետքը՝ կը խոթես բղուկին մէջ , ու ժով կը դարձնես . և որչափ որ ասոր վրայ կ'ապած կ'ելլէ՝ այնչափ բաւական

է կօշիկ մը փայլեցընելու . ուստի կը տարածես անիկայ կարծր խողանակի՝ մը ծայրը , ու անով բոլոր կօշիկը կը շփես . ետքը խողանակին մէկալ ծայրը կը դարձնես , անով ալ կը շփես , ու կը փայլի . Կէշ հոտ ալ չունենար , կաշին ալ աւելի կ'ակուղ ու անթափանց կ'ըլլայ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ

() Դէն առաջ եկած սոսկալի դիպած ճը :

Հին սովորութիւն է ամէն տեղ կաղանդին և ուրիշ մեծ տօներուն անուշեղէններով ու խմորեղէններով նոր տարին մէկմէկու շնորհաւորել , ու բարեմաղթել իրարու որ ան տարին ալ ողջ առողջ ու երջանկու թեամբ անցընեն : Եւ այց մեղք որ ամէնքն ալ աս բարեմաղթութեան պտուղը չեն վայելեր , կամ ուրիշ պատճառաւ , և կամ իրենց կամօք , երբոր թշուառութեան պատճառ եղող գործքերը՝ երջանկութեան պատճառ կը սեպեն , ու չարաչար կը խաբուին : Սաճառստանի Եւայսոց քաղաքին քովերը , որ Փեթրվարատին քաղաքին մօտ է , երկու գեղացի էրիկ կնիկ՝ օր առաջ պատրաստութի կը տեսնեն , կը մտնեն իրենց սովորական կառքն ու քաղաք կ'երթան որ տօնին համար պաշար ձարեն : Ուրիշ զանազան պաշարներէն զատ մէկ հարկաւոր պաշար մըն ալ աս կ'ըլլայ որ մկնդեղ ալ գնեն , վասն զի մկներուն ձեռքէն շատ գանգատ ունին եղեր : Եւ որովհետեւ հոն սովորութիւն է եղեր մկնդեղը բարկ օղիով բաղադրել մէկ ապակիէ ամանի մը մէջ լեցընել կուտան օղին ու հետը ան սաստիկ թոյնը , կ'ելլեն կը մտնեն իրենց կառքը , և ուշ ատեն դէպ 'ի գեղը կը դառնան : Ամբոն վրայ մութ ա-

1 Օւ-գ :

2 Հալան :

3 Նեղել լեւերի :

4 Ֆիւ Կիշ :

5 Գալանդ :

1 Ֆրէ :